600.0448.27.11.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2019 թվականի №448Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի №148Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը, հաշվի առնելով «ՎՏՎ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2019 թվականի նոյեմբերի 7-ի հայտը և նոյեմբերի 25-ի գրությամբ ներկայացված՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրամադրված №19-0068 բանկային երաշխիքը (ինը միլիոն հարյուր տասը հազար դրամ գումարի չափով և մինչև 2021 թվականի հոկտեմբերի 20-ը գործողության ժամկետով)՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 27-ի «ՎՏՎ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Եղեգնուտ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №148Ա որոշմամբ «ՎՏՎ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի

(հզորության) արտադրության №0543 լիցենզիայով ամրագրված «Եղեգնուտ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգել մեկ տարի ութ ամսով՝ որոշման մեջ «մինչև 2019 թվականի դեկտեմբերի 1-ը» բառերը փոխարինելով «մինչև 2021 թվականի օգոստոսի 1-ը» բառերով:

2. «ՎՏՎ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝

1) №0543 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Եղեգնուտ» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հունվարի 23-ի №178/10/5 գրությամբ ներկայացված №18-0011 երաշխիքի համաձայն երաշխավորված 9,110,000 (ինը միլիոն հարյուր տասը հազար) դրամ գումարից 4,555,000 (չորս միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի դեկտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ս.ՂԱՐԻՆՅԱՆ

ք. Երևան
27 նոյեմբերի 2019թ.